GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT
223 North Jackson St., Glendale, California 91206-4380
Telephone: 818-241-3111, Ext. 1215 • Fax: 818-548-9041

ԳԵՐԱՏԵՍՉԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Մարտ 9, 2017

Հարգելի ծնողներ և խնամակալներ,

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի աշակերտի ձեռքբերումների զեկույցը (վկայական) ընդգրկում է կարևոր տեղեկություններ ձեր զավակի ուսումնական առաջընթացի, ինչպես նաև նրա ջանասիրության, աշխատանքային սովորությունների և վարքագծային ակնկալիքների մասին: Վկայականը (կցված է) որպես միջոց է ծառայում որոշակի տեղեկություններ հաղորդելու ձեր զավակի ցուցաբերած առաջադիմության մասին, որպեսզի դուք կարողանաք հետևել և աջակցել նրա կրթությանը:

Ձեր զավակը ուսումնական ձեռքբերումների չափորոշիչների հիմունքով գնահատականներ է ստացել՝ լեզվարվեստի, «Անգլերեն լեզվի զարգացման ELD» (եթե վերաբերում է), մաթեմատիկայի, պատմության, սոցիալական գիտելիքների ու գիտության առարկաներից:

4	Աշակերտը չափորոշիչների կիրառման ուղղությամբ ցուցաբերել է <u>խոր</u> իմացություն (տիրապետել է բազմաթիվ հմտությունների և դրանք կիրառել է բարդ իրավիճակում լուծումներ գտնելու համար)
3	Աշակերտը չափորոշիչների կիրառման ուղղությամբ ցուցաբերել է <u>հմուտ</u> իմացություն (տիրապետել է հմտությունների և դրանք կիրառել է հիմնական իրավիճակում)
2	Աշակերտը չափորոշիչների կիրառման ուղղությամբ ցուցաբերել է <u>մասամբ</u> իմացություն (տիրապետել կամ մասամբ տիրապետել է որոշ հմտությունների, բայց չի կարողացել առանց աջակցության դրանք կիրառել)
1	Աշակերտը չափորոշիչների կիրառման ուղղությամբ ցուցաբերել է <u>չնչին</u> իմացություն (չի ըմբռնել ուսուցված հմտություններն ու գաղափարները)

Բացի այդ, յուրաքանչյուր առարկայի պարագայում, տրվել է ջանասիրության գնահատական: Մարմնմարզության պարագայում, ջանասիրության գնահատական է տրվել դասին մասնակցելու և ցուցաբերած վարքագծի համար: Digital Literacy-ի և տեսողական ու կատարողական արվեստի պարագայում տրվել է ջանասիրության գնահատական: Աշակերտը՝ ջանասիրության, աշխատանքային սովորույթների և վարքագծային ակնկալիքների համար ստանում է “S” «Բավարարում է ակնկալիքները» կամ “N” «Բարելավման կարիք կա» գնահատականները:

Հավելյալ տեղեկություններ, ներառյալ բացատրություններ ու հապավումներ, կարող եք գտնել ձեր զավակի վկայականի ետևի էջում:

Խնդրվում է այս վկայականը ձեզ մոտ պահել և միայն **ծրարը ստորագրել ու վերադարձնել ձեր զավակի ուսուցչին՝** ստացած տեղեկությունը հաստատելու համար: Խնդրվում է ուշադիր վերանայել վկայականը, ձեր զավակի հետ քննարկել և ցանկացած հարցի համար կապվել ձեր զավակի ուսուցչի հետ: Տան և դպրոցի միջև հաղորդակցությունը հիմնական գործոնն է աշակերտի դասարանային հաջողության համար:

Ուսումնական խորհրդի անունից հայտնում եմ իմ շնորհակալությունները՝ ձեր դպրոցի և ուսուցիչների նկատմամբ ձեր ցուցաբերած աջակցության համար: Երբ միասնաբար աշխատենք, մենք կարող ենք մեր երեխաներին նախապատրաստել իրենց ապագայի համար:

Հարգանքներով՝

Winfred B. Roberson Jr.
Դպրոցների գերատեսուչ